



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Գործ թիվ N 14-026

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2014 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 157րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 157-ԿԳ/1-Ա

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ, ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՈՒՄՐՇԱՏՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ն.Բաղդասարյանի

մասնակցությամբ՝

Գևորգ Գյոզալյանի
Կարապետ Աղաջանյանի
Մարտուն Փանոսյանի
Ալեքսանդր Սիրունյանի
Կարեն Մեծլումյանի
Մարտուն Փանոսյանի
Սիմոն Բաբայանի

*մասնակցությամբ փաստաբան՝
դիմող՝*

*Արմեն Ումրշատյան
Զարուհի Ենգոյան*

քարտուղարությամբ՝

Նաիրա Աղաջանյանի

2014թ. հոկտեմբերի 3-ին, Երևան քաղաքում քննարկելով ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Արմեն Ումրշատյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.

11.04.2014թ. ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) նախագահ Արա Զոհրաբյանը որոշում է ընդունել փաստաբան Արմեն Ումրշատյանի (արտոնագիր թիվ 385) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.1-րդ, 2.2.2-րդ և 2.7.2-րդ կետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցել կարգապահական վարույթ, որի հարուցման առիթ է հանդիսացել 31.03.2014թ. դիմող Զարուհի Ենգոբյանի դիմումը:

2. 31.03.2014թ. դիմող Զարուհի Ենգոբյանի դիմումի պատճառաբանությունները.

Դիմող Զ.Ենգոբյանը ներկայացրած դիմումում նշել է. «Փաստաբան Արմեն Ումրշատյանը 20.01.2013թ. իմ հետ կնքել է պայմանագիր, որ 3 ատյաններում մեզ փաստաբանական օգնություն տրամադրի: Դրանից հետո ինձանից վերցրել է 8500 (ուրթ հազար հինգ հարյուր) ԱՄՆ դոլար և ասել է, որ 10 օրում կվերադարձնի: Քանի որ նա մեր փաստաբանն էր, մենք վստահեցինք և գումարը տվեցինք: Այնուհետև նա մեզ ընդհանրապես փաստաբանական ծառայություն չմատուցեց և տված գումարն էլ լիովին չվերադարձրեց: Այսքանից հետո այլևս փաստաբանների նկատմամբ հավատս կորցրեցի և խնդրում եմ Արմեն Ումրշատյանին ենթարկել համապատասխան պատասխանատվության»:

Զարուհի Ենգոբյանը ներկայացրել է լրացուցիչ բացատրություն, որտեղ մանրամասն շարադրել է ամբողջ կատարվածը՝ փաստաբան Արմեն Ումրշատյանի կողմից իր նկատմամբ ցուցաբերած անարգանքները և այլն, ներկայացրել է 2013թ. հունվարի 20-ի փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրի բնօրինակը, ամուսնու Սոհեիլ Էբրահիմի Քոլաջիս և Զարուհի Ենգոբյանի կողմից փաստաբանին տրված նոտարական կարգով վավերացված լիազորագրերը, «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ավանդային թիվ ԱՀԲ-001059 պայմանագրի քաղվածքը գումարները վերցնելու և փաստաբան Ա. Ումրշատյանին փոխառությամբ տրամադրելու փաստի մասին, 25.01.2014թ. հայցադիմումի պատասխանը, որը կազմել և ներկայացրել է դատարան Ումրշատյանը, Երևան Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավության դատարանի 04.04.2014թ. թիվ ԵԱՔԴ/2452/02/12 քաղաքացիական գործով վճռի պատճենը, որտեղ որպես պատասխանողների ներկայացուցիչ է հանդես եկել ոչ թե փաստաբան Ա. Ումրշատյանը, այլ Ս. Ցակայանը:

3. Փաստաբան Արմեն Ումրշատյանի բացատրությունում բերված փաստարկները Կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ.

Փաստաբան Արմեն Ումրշատյանը ներկայացրել է գրավոր բացատրություն, որտեղ նշել է. «Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ իրոք Չարուհի Ենգոբյանի հետ կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր՝ 20.000 ՀՀ դրամ գումարի վերաբերյալ, որն ի դեպ մինչ օրս չի վճարվել, Չարուհի Ենգոբյանի և վերջինիս փաստացի ամուսին Իրանի քաղաքացի Սոհեիլ Քոլաջիի նկատմամբ ՀՀ քր. օր. - 258 և 118 հոդվածների հատկանիշներով տուժողի բողոքի հիման վրա փաստի կապակցությամբ նախապատրաստվող նյութերի շրջանակներում: Այդ գործով ես ներգրավվել եմ որպես պաշտպան և նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է հանցադեպի բացակայության պատճառով: 20.000 ՀՀ դրամ սինվոլիկ գումարի առկայությունը եղել է ուղղակի ձևական՝ անվճար փաստաբանական ծառայության կարգի կիրառումը բացառելու նպատակով: Ինչ վերաբերվում է Չարուհի Ենգոբյանի կողմից բարձրացված 8500 ԱՄՆ դոլարի խնդրին, ապա պալատին հայտնում եմ, որ ես հանդիսանում եմ «Խալեյան» ՓԲԸ-ի և «Արմեն Ումրշատյանի» ՍՊԸ-ի հիմնադիր գլխավոր տնօրենը, որն իրականացնում է ՀՀ տարածք վայրի կենդանիների ներմուծման և արտահանման գործառնություններ: Լինելով որպես գլխավոր տնօրեն Չարուհի Ենգոբյանի առաջարկով ամսեկան 2,5% հավելավճարով կնքվել է փոխառության պայմանագիր, որը ձևակերպվել է որպես անտոկոս փոխառության պայմանագիր: Պայմանագրի ստորագրման պահին ինձ է փոխանցվել 8500 ԱՄՆ դոլար, որի մասին տրվել է ստացական: Սակայն գումարը ստանալուց ուղիղ 5 օր անց իմ գրասենյակ է այցելել Չարուհի Ենգոբյանը և պահանջել է հետ վերադարձնել իր կողմից վճարված ողջ գումարը: Ես ցույց եմ տվել բանկային անդորրագրեր, որ այդ գումարն արդեն իսկ փոխանցվել են Արաբական միացյալ Էմիրություն: Իրականում պարզվել է, որ Չարուհի Ենգոբյանը և վերջինիս փաստացի ամուսին Իրանի քաղաքացի Սոհեիլ Քոլաջին խաբեության միջոցով յուրացրել են Իրանի մեկ այլ քաղաքացու դրամական միջոցները և փոխանցել ինձ տոկոսով գումար աշխատելու նպատակով: Երբ կեղծիքը բացվել է, իմ գրասենյակ են այցելել Իրանի այդ քաղաքացիները, որոնք պարզաբանել և խնդրել են այդ գումարը վերադարձնել իրենց: Ի սպառնալուսն այդ գործարքի կնքվել է նաև նոտարական վավերացմամբ պայմանագիր 07.02.201թ., որտեղ ամրագրված է իրական գումարը փոխառությանը: Արդեն իսկ 6000 ԱՄՆ դոլար անմիջապես փոխանցվել է պարտաիրոջը, առկա է գրավոր ստացականներ՝ ձեռագիր գրված Չարուհի Ենգոբյանի կողմից: Այդ գործարքը որևէ առնչություն չունի փաստաբանական գործունեության հետ, քանի որ ես հանդիսանալով ընկերությունների գլխավոր տնօրեն իրականացնում եմ առևտրային գործունեություն, որը հիմնված է վայրի կենդանիների ներմուծման և արտահանման հետ» :

4. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար հիմք ծառայած փաստաբանի վարքագծի կանոնները.

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.2.1 կանոնի. «Վստահության վրա հիմնված հարաբերությունները կարող են գործել միայն այն դեպքում, եթե փաստաբանի հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը կասկածի տակ չեն առնվում: Փաստաբանի համար այս ավանդական արժեքները մասնագիտական պարտավորություններ են:»

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.2.2 կանոնի. «Փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն)»:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 կանոնի. «Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում»:

5. Կարգապահական պատասխանատվության հարցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Փաստաբան Արմեն Ումրշատյանը չի կատարել 20.01.2013թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված պարտականությունները:

Փաստաբան Արմեն Ումրշատյանը կարգապահական վարույթի ընթացքում հայտնել է, որ փաստաբանական ծառայության մատուցման պայմանագրով նախատեսված գումարը Զարուհի Ենգոբյանից ամբողջությամբ ստացել է:

Փաստաբան Արմեն Ումրշատյանը Զարուհի Ենգոբյանի հետ գտնվել է փաստաբան-վստահորդ հարաբերության մեջ և մտել քաղաքացիական հարաբերության մեջ և փոխառությամբ գումար վերցնել:

6. Պալատի խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննարկելով ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Արմեն Ումրշատյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, հետազոտելով Զ. Ենգոբյանի դիմումը, լրացուցիչ դիմումը, փաստաբանի գրավոր բացատրությունը, ուսումնասիրելով կարգապահական վարույթում առկա մյուս ապացույցները՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արմեն Ումրշատյանին

կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ներկայացված Ձ . Ենգորյանի դիմումը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Խորհուրդը սույն գործով պետք է նախ և առաջ պատասխանի հետևյալ հարցերին.

1. 20.01.2013թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով ինչպիսի՞ ծառայություն պետք է մատուցեր Ա. Ումրշատյանը Ջարուհի Ենգորյանին և արդյո՞ք մատուցել է, թե ոչ:
2. Արդյո՞ք Ջարուհի Ենգորյանը փաստաբան Ա. Ումրշատյանին գումարը հանձնելիս գտնվել է մոլորության մեջ և գումարը հանձնել է միայն այն պատճառով, որ կախվածության մեջ է գտնվել փաստաբանից, թե ոչ:

Այսպես՝

20.01.2013թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով ինչպիսի՞ ծառայություն պետք է մատուցեր Ա. Ումրշատյանը Ջարուհի Ենգորյանին և արդյո՞ք մատուցել է, թե ոչ:

20.01.2013թ. «Արմեն Ումրշատյան» ՍՊ ընկերության, ի դեմս տնօրեն Արմեն Ումրշատյանի և ՀՀ քաղաքացի Ջարուհի Ենգորյանի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Վերը նշված պայմանագրով. «Կատարողը (Արմեն Ումրշատյան) պարտավորվում է Պատվիրատուին (Ջարուհի Ենգորյանին) մատուցել փաստաբանական ծառայություններ թիվ ԵԱՔԴ/2452/02/12 քաղ. գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում, ՀՀ վճռաբեկ դատարանում»:

Կատարողական վարույթի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ փաստաբան Արմեն Ումրշատյանը Ջարուհի Ենգորյանի գործով միայն կազմել է հայցադիմումի պատասխան: Վերջինս որևէ այլ իրավաբանական օգնություն ցույց չի տվել:

Ավելին, թիվ ԵԱՔԴ/2452/02/12 քաղ. գործով կայացրած վճռի և www.datalex.am կայք էջի վերծանումից հետևում է, որ դիմող Ջարուհի Ենգորյանի շահերը Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում և ՀՀ վճռաբեկ դատարանում ներկայացրել է փաստաբան Սարգիս Ցականյանը:

Այն, որ փաստաբան Արմեն Ումրշատյանը թիվ ԵԱՔԴ/2452/02/12 քաղ. գործով չի իրականացրել ներկայացուցչություն, հիմնավորվում է նաև փաստաբանի կողմից

տրամադրված բացատրությամբ, որտեղ փաստաբան Արմեն Ումրշատյանը նշել է, որ դիմող Ջարուհի Ենգորյանի ամուսնուն իրավաբանական օգնություն է ցույց տվել քրեական գործով և դիմող Ջարուհի Ենգորյանին քաղաքացիական գործով իրավաբանական օգնություն ցույց չի տվել:

Այսպիսով փաստաբան Արմեն Ումրշատյանը թույլ է տվել փաստաբանի վարքագծի կանոնադրքի խախտում, քանի որ իր մասնագիտական կարողությունների և կողմերի միջև կնքված պայմանագրի շրջանակներում բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չի տվել դիմող Ջարուհի Ենգորյանին և չի կատարել պայմանագրով իր վրա դրված պարտավորությունները:

Արդյո՞ք Ջարուհի Ենգորյանը փաստաբան Ա.Ումրշատյանին գումարը հանձնելիս գտնվել է մոլորության մեջ և գումարը հանձնել է միայն այն պատճառով, որ կախվածության մեջ է գտնվել փաստաբանից, թե ոչ:

Կարգապահական վարույթում առկա փոխառության պայմանագրերի, պարտավորագրի և փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի ուսումնասիրությունից հետևում է, որ դիմող Ջարուհի Ենգորյանը փաստաբան Արմեն Ումրշատյանին փոխառությամբ գումարը հանձնել է այն ժամանակ, երբ կողմերի միջև արդեն իսկ ձևավորված է եղել փաստաբան-վստահորդ հարաբերությունները և փաստաբան Արմեն Ումրշատյանը պարտավորվել է ներկայացնել դիմող Ջ. Ենգորյանի շահերը:

Այսինքն, դիմող Ջ. Ենգորյանը փոխառությամբ գումար տալու ժամանակ եղել է մոլորության մեջ, քանի որ գիտակցել է, որ եթե մերժի փաստաբանին, ապա փաստաբանը կարող է միտումնավոր սխալ իրավաբանական օգնություն ցույց տալու միջոցով իր համար թիվ ԵԱՔԴ/2452/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում առաջացնի անհիմն նյութական պարտավորություններ: Փաստաբան Արմեն Ումրշատյանը օգտագործել է այն հանգամանքը, որ դիմող Ջ. Ենգորյանը կախվածության մեջ է գտնվում իր անձից, ինչի արդյունքում էլ կասկածի տակ է դրել փաստաբանի հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը:

Վերոգրյալից, հետևում է, որ փաստաբան Արմեն Ումրշատյանի կողմից փաստաբանի ավանդական արժեքները ոտնահարելը հանգեցրել է փաստաբանի վարքագծի կանոնադրքի կանոնների խախտմանը:

Այսպիսով, 1-ին և 2-րդ հարցերի պատասխանների վերլուծությունից հետևում է, որ փաստաբան Արմեն Ումրշատյանը թույլ է տվել փաստաբանի վարքագծի կանոնադրի 2.2.1-րդ, 2.2.2-րդ և 2.7.2-րդ կետերի խախտումներ, ինչն էլ հիմք է վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի. «Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննությունից հետո պալատի խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը փաստաբանին սույն օրենքով նախատեսված կարգապահական տույժի ենթարկելու մասին»:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի. «Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը,... տուգանք»:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 4-րդ մասի. «Տուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը, որը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը»:

Խորհուրդը ուսումնասիրելով կարգապահական գործի նյութերը, ՀՀ փաստաբանների պալատի կողմից փաստաբան Արմեն Ումրշատյանի վերաբերյալ տրամադրված տեղեկանքը, Արմեն Ումրշատյանին բնութագրող տվյալները, այն է, որ նա ունի չմարված կարգապահական տույժեր, որոշում է փաստաբան Արմեն Ումրշատյանին ենթարկել կարգապահական տույժի և որպես տուգանքի չափ սահմանել 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը և 39.9-րդ հոդվածը, Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Արմեն Ումրշատյանին ենթարկել կարգապահական տույժի և որպես տուգանքի չափ սահմանել 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումը պատշաճ կարգով ուղարկել փաստաբան Արմեն Ումրշատյանին և դիմող Ջարուհի Ենգոբյանին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստի նախագահող

Նիկոլայ Յու. Բաղդասարյան

